
ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱՐԿՄԱՆ ԵՂԱՆԱԿ

ԱՐՄԱՆ ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆ

Որպես ինքնուրույն հետազոտության ոլորտ՝ հասարակական գիտություններում առօրեականության հիմնախնդիրը համեմատաբար քիչ է ուսումնասիրվել: Եղած ուսումնասիրություններում, լավագույն դեպքում, քննարկվում են հարցի պատմագիտական կամ մարդաբանական տեսանկյունները, և փորձ է արվում նկարագրելու պատմական այս կամ ժամանակաշրջանի կամ մարդկային որոշակի հանրույթի կենցաղը, հանդերձանքը, աշխատանքը, իրերը, հանգիստը, սովորույթները և այլն: Բայց եթե նշված գիտակարգերում այսպիսի մոտեցումը արդարացված է, ապա հասարակական համակարգի յուրահատկությունները բնութագրող հիմնարար տեսությունների պարագայում այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ այս դեպքում առօրեականությունը հիմնականում դիտվում է որպես ածանցյալ ոլորտ, որն իր բնույթով չի կանոնակարգվում խիստ սկզբունքներով, տարերային է, որոշ դեպքերում՝ նույնիսկ իռացիոնալ և, հետևաբար, չի կարող դիտվել որպես սոցիալական տեսության համակարգաստեղծ բաղադրիչ: Արդյունքում՝ սոցիալական տեսությունների համակարգից շատ հաճախ դուրս է մնում մի մեծ մասնաբաժին, ինչն իր էվրիստիկական հնարավորություններով ամենևին էլ չի զիջում, իսկ որոշ դեպքերում նույնիսկ գերազանցում է դասական համարվող սոցիալական տեսություններին, մանավանդ որ առօրեականության սոցիալ-փիլիսոփայական հարցադրումներն առաջադրվում են արդեն ոչ դասական փիլիսոփայական մտածողության ձևավորման հետ միաժամանակ: Այսպես, դեռևս 20-րդ դարի սկզբին էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը առաջ քաշեց աշխարհում մարդու առօրյա գոյության հիմնախնդիրը: Այս գործում նշանակալից ներդրում ունեցավ Մ. Չայդեգերը, ով, վերլուծելով մարդկային գոյության հիմքերը, առաջ քաշեց Dasein-ը՝ որպես առկա կեցություն, անմիջական ներկայություն և մարդկային բնական ապրումների ոլորտ:

Առօրեականության հիմնահարցի բովանդակային վերլուծությունը սերտորեն կապված է «կենսաաշխարհ» հասկացության հետ, որի տեսականացումը և խորքային ամբողջական վերլուծությունը առաջին անգամ իրականացրեց Է. Չուսեռլը իր «Եվրոպական գիտությունների ճգնաժամը և տրանսցենդենտալ ֆենոմենոլոգիան» աշխատության մեջ: Չուսեռլի համար կենսաաշխարհը բնական առօրյա գիտակցության մինչռեֆլեքսային ակնհայտությունների աշխարհն է՝ ընկալված բնական դիրքորոշմամբ: Չուսեռլը առաջ է քաշում բնական դիրքորոշման սկզբունքը՝ որպես աշխարհի հանդեպ «նախվ» վերաբերմունք, համաձայն որի՝ իրերը դիտվում են որպես սուբյեկտից դուրս, տարածության և ժամանակի մեջ գոյություն

ունեցող: Այսպիսի բնական ընկալման դեպքում մարդն իրերն ընդունում է ոչ թե որպես իր գիտակցության մեջ գոյություն ունեցող պատկերներ, այլ որպես գիտակցությանը տրանսցենդենտ ֆիզիկական իրականություն: Կենսաաշխարհի ուսումնասիրությունը, համաձայն Յուսեֆի, անհրաժեշտ է, որպեսզի հասկանալի դառնա, թե ինչպես են նրա հիմքի վրա ձևավորվում գիտելիքի բոլոր համակարգերը, այդ թվում և՛ օբյեկտիվ գիտությունները, և պարզաբանվի դրանց փոխկապվածությունը կենսաաշխարհի հետ:

«Կենսաաշխարհի» հետագա սոցիալ-փիլիսոփայական իմաստավորումը իրականացրել է սոցիալական ֆենոմենոլոգիայի դպրոցի հիմնադիր Ա. Շյուցը: Նա առաջիններից մեկն էր, ով մատնանշեց կենսաաշխարհի առօրյա բնույթը, ինչը հնարավորություն տվեց տեսական մտածողության համակարգ ներմուծելու «առօրեականություն» հասկացությունը՝ սկզբում իբրև կենսաաշխարհի բնութագրիչ, իսկ ապա նաև՝ իբրև հատուկ հետազոտությունների հիմք: Այդուհանդերձ, սոցիալական տեսության մեջ «առօրեականություն» հասկացությունը նույնական չէ «կենսաաշխարհի» հասկացությանը: Եթե «կենսաաշխարհը» ներառում է տեսականացման ոլորտից դուրս մարդու կողմից ստացվող մշակութային փոխազդեցությունների ամբողջությունը, ապա «առօրեականությունը» նախ և առաջ ընդգրկում է կրկնվող կոմունիկացիաների և իմաստների ոլորտը, ինչն իրականացվում է ինտերսուբյեկտիվության հարաբերությունների շրջանակներում: Այս հիմքի վրա էլ հասարակության անդամների գիտակցության և գործունեության ոլորտում առաջանում և ձևավորվում է հասարակական երևույթների և գործընթացների ինտերսուբյեկտիվորեն կազմակերպվող օբյեկտիվությունը: Լինելով իրականության ոլորտներից մեկը՝ այն՝ որպես «նշանակությունների վերջնական ոլորտ», առաջնային է այլ ոլորտների նկատմամբ¹: Շյուցը առօրյա կյանքը դիտում է որպես բարձրագույն իրականություն, ինչի համեմատ մյուս ոլորտները ներկայանում են որպես կեղծ իրականություններ: Առօրեականությունը մարդկային փորձի այն ոլորտն է, որը նկարագրվում է աշխատանքային գործունեության հիման վրա ձևավորված՝ աշխարհի ընկալման և իմաստավորման յուրահատուկ ձևով: Վերջինիս համար բնութագրական են գիտակցության լարված-արթնի վիճակը, աշխարհում անհատական մասնակցության ամբողջականությունը՝ որպես տարածության, ժամանակի և սոցիալական փոխազդեցությունների ինքնաակնհայտ, իրենց գոյության օբյեկտիվության կասկածանքի տեղիք չտվող ձևերի ամբողջություն: Կարելի է հավելել, որ բոլոր այդ ձևերը ինտերսուբյեկտիվորեն, այսինքն՝ սոցիալապես կազմակերպված են²:

Շարունակելով Շյուցին՝ Բերգերը և Լուկմանը նա, առօրյա կյանքի իրականությունն առանձնացնելով բազմաթիվ այլ իրականություններից, այն անվանում են բարձրագույն ռեալություն: Այսպիսի նշանակությունը, ըստ նրանց, տրվում է շնորհիվ այն հանգամանքի, որ հենց առօրյա կյանքում է գիտակցության լարվածությունը հասնում իր բարձրակետին, առօրյա կյանքը գիտակցության մեջ դրոշմվում է առավել ուժեղ, խորը և հետևողա-

¹ Տե՛ս Պյոս Ա. О множественных реальностях // Шюц А. Избранное: Мир, светящийся смыслом. М., 2004, էջ 421:

² Տե՛ս Պյոս Ա. Структура повседневного мышления // «Социологические исследования», 1988, № 2, էջ 130:

կանորեն: Սուբյեկտն այն ընկալում է արթուն վիճակում, բնական դիրքորոշմամբ՝ որպես կարգավորված ռեալություն, ինչի ֆենոմենները դասակարգված են կոնկրետ նմուշներում³: «Այստեղ-և-հիմա»-ի մոդուսները, հանդես գալով որպես առօրեականության նկատմամբ մարդկային գիտակցության կենտրոնացման միջոց, կազմակերպում են առօրյա իրականությունը: Առօրյա կյանքի ռեալությունը անհաղթահարելի իրողություն է, քանի որ այն իր գոյության ապացույցներ և ստուգումներ չի պահանջում:

Առօրեականության հանդեպ հետաքրքրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինիս հետազոտությունը նպաստում է սոցիալական «բարձր» տեսությունների և կյանքի առօրյա գիտելիքների միջև անջրպետի հաղթահարմանը՝ սոցիալական կառուցվածքների և անհատական գիտակցության տեսությունները ներկայացնելով իբրև մեկ ամբողջություն: Եթե դասական փիլիսոփայության համար սուբյեկտը նախ և առաջ գիտական ճանաչողության սուբյեկտն է (մարդկանց որոշակի փոքրամասնություն), ապա ոչ դասական փիլիսոփայության շրջանակներում տեղի է ունենում շրջադարձ դեպի առօրեականության «փոքր» մարդը: Համապատասխանաբար, առօրեականությունն սկսում է իմաստավորվել որպես ինքնուրույն, դրական և անհրաժեշտ արժեք: Առօրեականությունն են ոչ միայն մարդկանց մտքերը, զգացմունքներն ու ցանկությունները: Այն նախ և առաջ մարդկային կյանքի կարգավորվածությունն է՝ ամրագրված համապատասխան ինստիտուտներում: Վերջիններս ձևավորում են մարմնականության յուրահատուկ տիպ, գործունեության նորմեր ու սկզբունքներ, որոնցով մարդ ստիպված է ղեկավարվել կյանքում, և որոնք կարող են տեսաբանին թվալ ոչ խիստ, իսկ բարոյագետին՝ նույնիսկ անսկզբունքային: Ընդ որում՝ այդ սկզբունքների յուրացումը ավելի շատ նման է վարժեցման, այսինքն՝ այն տեղի է ունենում հիմնավորումների շրջանցմամբ: Այլ կերպ՝ առօրյա վարքը դրսևորվում է ոչ այնքան քննադատական ռեֆլեքսիայի հիման վրա, որքան կանոններին հետևելու միջոցով: Մարդիկ կյանքում իրենց պահում են այլ կերպ, քան գիտության մեջ: Եթե գիտության մեջ ամեն ինչ ենթարկվում է ստուգման և հիմնավորման, իսկ դատողությունները խմբավորվում են որպես ճշմարիտ կամ կեղծ, ապա առօրյա փոխհարաբերությունների մակարդակում գիտելիքի ճշմարտության հարցի նշանակությունը շատ դեպքերում երկրորդային է: Այս տեսանկյունից առօրեականությունը կարելի է դիտել որպես մարդկային գործունեության այնպիսի ոլորտ, ինչը կապված չէ նրա ինքնահրազորման գիտական եղանակի հետ: «Ի սկզբանե առօրեականությունը մեզ ներկայանում է որպես իմաստային ունիվերսում, նշանակությունների ամբողջություն, որոնք մենք պետք է մեկնաբանենք, որպեսզի հենարան ձեռք բերենք այս կյանքում, նրա հետ գանք համաձայնության»⁴:

Առօրեականության կառուցվածքները միահյուսվելով ձևավորում են յուրահատուկ լոկալ տարածություններ, որոնք ներառում են մարդկային կենսագործունեության տարբեր կողմեր: Նրանք ընդգրկում են ինչպես գիտակցական, այնպես էլ անգիտակցական տարրեր, որոնք էլ ձևավորում

³ Տե՛ս **Бергер П., Лукман Т.** Социальное конструирование реальности. Трактат по социологии знания. М., 1995, էջ 67:

⁴ **Шюц А.** Структура повседневного мышления, с. 131.

են ամօրյա կեցոյեան բարդ համակարգը: Կենցաղի, կենսակերպի մանրամասնութիւններէից և մանրութիւններէից ձևավորվում է կայուն որակական որոշակիութիւնը՝ հասարակութեան յուրահատուկ «դէմքը»⁵: Առօրեականութիւնը անմիջական, սովորական, ավանդական և կրկնվող կենսաիրագործումն է, որտեղ նրա սուբյեկտները պատկանում են իրենք իրենց: Այն մարդկային ակտիվութեան ակունքն է առհասարակ, և հետևաբար՝ նրա կառուցվածքի, կապերի բնույթի և դրսևորումների ուսումնասիրութիւնը՝ որպէս սուբյեկտի առաջնային իրականութեան վերլուծութիւն, խիստ կարևոր է հասարակութեան ներդաշնակութեան և ամբողջականութեան խախտումների լիարժէք հետազոտման համար: Գիտութեան և առօրեականութեան միավորումը կարող է բացահայտել մարդկային կյանքում սոցիալական տեսութիւնների մասնակցութեան նոր հնարավորութիւններ: Այլ կերպ՝ առօրեականութեան տեսականացման փորձերը նպաստում են սոցիալական տեսութիւնների խորքային հիմունքների վերհանմանը, ըստ այդմ՝ հատուկ ուշադրութեան է արժանի ամօրյա մեկնաբանութիւնների կատեգորիաների և հասարակական գիտութիւնների հասկացութիւնների միջև եղած կապի բացահայտման տեսական խնդիրը:

Աշխարհի մասին մեր ողջ գիտելիքը ենթադրում է որոշակի կառուցվածքների առկայութիւնը՝ որոշակի վերացարկումների, ընդհանրացումների, ձևայնացումների և իդէալականացումների ամբողջութիւն, որոնք համապատասխանութեան մեջ են գտնվում մտածողութեան կազմակերպման որոշակի մակարդակի հետ: Հասարակական գիտութիւնների դեպքում մենք գործ ունենք փաստերի, իրադարձութիւնների և տվյալների յուրահատուկ կառուցվածքի հետ: Սոցիալական իրականութիւնը դրանում ապրող, գործող և մտածող մարդկանց համար արդէն իսկ օժտված է յուրահատուկ նշանակութեամբ: Նրանք արդէն իրականացրել են իրենց «ընտրութիւնը» և մեկնաբանել իրականութիւնը ամենօրյա կյանքի առօրեական մտածողութեան կառուցվածքների միջոցով: Մտածողութեան հենց այդ օբյեկտներն են ազդում նրանց վարքի վրա, որոշում գործողութեան նպատակները և հասանելի միջոցները, այսինքն՝ օգնում կողմնորոշվելու սոցիոնշակութային միջավայրում: Հետևաբար, հասարակական գիտութիւնների կողմից ստեղծված օբյեկտները մեզ ուղղորդում են ոչ թէ դեպի անմիջական իրականութիւն, այլ դեպի այն կառուցվածքները, որոնք ինքնին ստեղծվել են ամօրյա կյանքով ապրող մարդկանց ողջախոհութեան միջոցով⁶:

Այս համատեքստում հարկ է նշել, որ մարդկային ամօրյա կյանքի տեսականացումը անխուսափելիորեն առաջացնում է մի շարք մեթոդաբանական հիմնախնդիրներ, որոնք կապված են այդ կյանքի ընթացքի ներքին անհամասեռութեամբ և փոփոխականութեամբ պայմանավորված՝ բազմակերպ և հաճախ իրար փոխբացառող տվյալների ընդհանրացման և գնահատման բարդութիւնների հետ: Ամօրյա կյանքը կարելի է տեսականացնել տարբեր եղանակներով, օրինակ՝ ելնելով սուբյեկտից, օբյեկտիվորեն գոյութիւն ունեցող մարմինների աշխարհից, սոցիալական հարաբերու-

⁵ Տե՛ս **Золотухина-Аболина Е.** Философия обыденной жизни (экзистенциальные проблемы). Ростов-на-Дону, 1994, էջ 34:

⁶ Տե՛ս **Шюц А.** Обыденная и научная интерпретация человеческого действия // Шюц А. Избранное: Мир, светящийся смыслом, էջ 9:

թյուններից, լեզվական հաղորդակցման գործընթացից կամ ինքնաբերաբար կատարվող գործողություններից: Սակայն, այս ամենով հանդերձ, կարծում են, որ ինչ-որ առումով ելակետային կարելի է համարել առօրյա կյանքի յուրահատուկ ռացիոնալության հիմնախնդիրը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս տեսանկյունից առօրեականությունը արժանի է բացասական գնահատականի, քանի որ մի ոլորտ է, որին պակասում է որոշակիությունը, կամ շատ դեպքերում էլ այն ընդհանրապես անորոշ է: Մյուս կողմից, սակայն, առօրյա կյանքի ռացիոնալության հիմնախնդիրն առնչվում է մարդկային գործողության շարժիչ ուժերին, որոնք աշխատում են աննկատ և ինքնաբերաբար՝ ապահովելով սոցիալական իրականության կապվածությունը մեկ ամբողջական համակարգում: Այս դեպքում խոսքը վերաբերում է այն բանին, թե գործողության, խոսելու և գնահատման որ ծրագրեր են մարդկանց կողմից ընկալվում որպես ընդունելի, բնական և անհրաժեշտ՝ առանց երկբայության և մերժումների: Հասարակության տեսությամբ զբաղվող մասնագետների համար չափազանց կարևոր է նման ոչ ակնհայտ մեխանիզմների բնույթի իմաստավորումը՝ հասարակական կյանքի հաճախ բուռն և անկանխատեսելի գործընթացների վրա որոշակի ազդեցություն ունենալու առումով:

Անդրադառնալով առօրյա կյանքի ռացիոնալության հիմնախնդրին՝ կարելի է ասել, որ հանձին առօրեականության, դրա ողջ անորոշությամբ հանդերձ, մենք, այնուամենայնիվ, գործ ունենք ռացիոնալության յուրահատուկ դրսևորումների հետ: Այս համատեքստում ռացիոնալություն ասելով կարելի է հասկանալ այն, ինչը առարկայանում է իմաստային, ճիշտ, պարբերաբար կրկնվող, հասկանալի փոխազդեցություններում, որոնք, սակայն, գոյություն ունեն ռացիոնալության տարբեր դաշտերում և ոճերում⁷:

Առօրյա կյանքի ռացիոնալության բազմարժեքության փաստը կարելի է հասկանալ հետևյալ կերպ. առօրյա կյանքում յուրաքանչյուր անհատ «տեղակայված» է իրեն յուրահատուկ ձևով: Այս հանգամանքը վերաբերում է ոչ միայն սեփական ես-ի և իրականության ֆիզիկական ընկալմանը, այլև աշխարհի իմաստային բնութագրություններին: Այսպիսի անհատական տեսադաշտը Շյուլցն անվանում է անհատի կենսագրական իրավիճակ: Այս հասկացությունը իրենից ներկայացնում է մի շարք դետերմինանտների հավաքական անվանում: Մարդու կողմից աշխարհի և իր դիրքորոշման ընկալումը պայմանավորված է նրա ծննդյան, հասունացման, դաստիարակության, կրոնական, գաղափարախոսական և այլ հանգամանքներով: Կենսագրական իրավիճակը անհատի վրա ներգործող կենսաբանական և սոցիոնշակութային գործոնների անհատական մեկնությունն է, ինչը բոլորի համար որպես ընդհանուր գոյություն ունեցող «աշխարհն առհասարակ» վերածում է յուրաքանչյուր «կոնկրետ անհատի աշխարհի»⁸: Անհատի կյանքի և նոր փորձի ձեռքբերմանը զուգընթաց անընդհատ փոփոխվող կենսագրական իրավիճակը այն հիմքն է, որն ապա-

⁷ Տե՛ս **Вальденфельс Б.** Повседневность как плавильный тигль рациональности // Социо-Логос, М., 1991, էջ 40:

⁸ Տե՛ս **Шюц А.** Символ, реальность и общество // **Шюц А.** Избранное: Мир, светящийся смыслом, էջ 482:

հովում է յուրաքանչյուր այլ մարդու և սոցիալական փոխազդեցության համարժեք ընկալումն ու մեկնաբանությունը: Առօրեականությունը, ըստ այդմ, կարելի է հասկանալ որպես պրակտիկ գիտելիքների համակարգ, ինչը ներառում է այս կամ այն իրավիճակում ցանկալի նպատակին հասնելու համար հանրորեն ընդունելի վարքի, գործողությունների կոնկրետ հերթականության իմացությունը:

Ըստ այդմ՝ կարելի է պնդել, որ որոշակի տեսանկյունից առօրյա կյանքը գրեթե ամբողջությամբ բաղկացած է բանական, հասկանալի, կանխագուշակելի գործողություններից: Սրա ամենալավ ապացույցը սոցիալական ցանկացած, նույնիսկ ամենաբարդ փոխազդեցությունների նորմալ, փոխհամաձայնեցված ընթացքն է, թեև ակնհայտ է, որ ամենօրյա գործողությունների ռացիոնալությունը տարբերվում է, ասենք, Վեբերի նկարագրած իդեալական, տրամաբանական ռացիոնալությունից: Շյուցը կարծում է, որ առօրյա ռացիոնալությունը պետք է բացատրվի որպես անհատների կողմնորոշում դեպի սոցիալապես հավանության արժանացած խմբային չափանիշները և վարքի կանոնները (նորմեր, ավանդույթներ, հմտություններ): Մինչդեռ այս չափանիշների ոչ առաջացումը և ոչ էլ կարևորությունը չեն ընկալվում «ռացիոնալորեն»⁹: Դրանք ավանդական են, սովորույթի դեր ստացած, ընդունվում են մարդկային հավատի հիմքի վրա և ոչ մի կերպ չեն մտնում ռացիոնալության հաշվարկման համակարգ: Այնպես որ, այդ սկզբունքների վրա հիմնված վարքը թեև բանական է, հասկանալի և կանխատեսելի, սակայն խիստ մոտեցման դեպքում այն ռացիոնալ կարելի է համարել միայն վերապահումներով: Այսպիսին է առօրյա կյանքի աշխարհն իր ամենաընդհանուր գծերով, ինչպես այն ընկալվում է սոցիալական անհատների գերակշիռ մեծամասնության կողմից: Սա այն աշխարհն է, որտեղ Ես-ը գոյություն ունի այնպես, ինչպես Ուրիշ-ը, որտեղ, փոխազդեցությունների ընթացքում ազդելով շրջապատի վրա, փոխվում է նաև ինքը՝ սուբյեկտը՝ ենթարկվելով դիմացիների ազդեցությանը: Հենց այսպես է անհատական, սուբյեկտիվ շարժառիթների հիման վրա կառուցարկվում մարդկային փոխհարաբերությունների համակարգը, ինչի անկյունաքարը սուբյեկտների կողմից տիպական մոտիվացիոն մոդելների փոխադարձ վերագրումն է: Նման «սոցիալապես կազմակերպված» օբյեկտիվությունը առօրյա կյանքի իրականության կարևորագույն որակն է:

Առօրյա կյանքը ոչ թե ինքնին գոյություն ունեցող է, այլ առաջանում է «առօրեականացման» գործընթացների հիման վրա, որոնք էլ, իրենց հերթին, լրացվում են «առօրեականության հաղթահարման» գործընթացներով¹⁰ (այս գործընթացները արդի սոցիալ-փիլիսոփայական տեսություններում հաճախ իմաստավորվում են նաև որպես անհատականացում և տիպականացում): Եթե առօրեականությունը դիտարկում ենք որպես մարդու և հասարակության ձևավորման ու կազմակերպման գործընթաց, ապա «առօրեականացում» ասելով նկատի ենք ունենում կյանքին հարմարվելու գործընթացը, ինչն իր հերթին դրսևորվում է որպես ուսուցման, ավան-

⁹ Տե՛ս **Шюц А.** Обыденная и научная интерпретация человеческого действия, էջ 33:

¹⁰ Տե՛ս **Вальденфельс Б.**, նշվ. աշխ., էջ 46-47:

դույթների յուրացման և նորմերի ամրապնդման գործընթացների ամբողջություն: Այստեղ առօրեականությունը հանդես է գալիս որպես մի ոլորտ, որտեղ հավաքվում և պահպանվում են իմաստային «նստվածքները»: Առօրեականացումը նախ և առաջ նշանակում է այն ամենի մարմնավորումն ու յուրացումը, ինչը կազմում է մարդու «միսն ու արյունը»: Դրանց թվին են դասվում լեզվական արտահայտությունների ամրապնդումը, տարբեր սարքերի հետ վարվելու կանոնները, զանազան իրավիճակներում կողմնորոշվելու հմտությունները և այլն: Այստեղ գիտելիքները և հմտությունները ձեռք են բերում այնպիսի հուսալիություն, որին երբևիցե չի կարելի ամբողջությամբ հասնել արհեստական եղանակներով: Այսպիսի մարմնավորումը չի կարելի հասկանալ որպես կանոնների «մաքուր» կիրառում կամ նույնիսկ մեխանիկական վարժեցում, այն ինքնին արդեն փորձի յուրահատուկ տեսակ է: Ընդ որում, առօրեականացումն առնչվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներին (ներառյալ գիտությունը, արվեստը, կրոնը և այլն), որովհետև վերջիններս միայն ինստիտուտականացվելով են ձեռք բերում այնպիսի ձև, որով կարող են շարունակել իրենց գոյությունը և պահպանել ավանդույթները: Այս տեսանկյունից է բխում այն մտտեցումը, համաձայն որի՝ առօրեականությունը չի կարելի դիտել որպես սոցիալական իրականության առանձին հատված, այն գոյություն ունի միայն հասարակության, նրա իշխանական կառույցների և մշակույթի հետ միասնության մեջ:

Առօրեականացման գործընթացն իր դիալեկտիկական հակոտնյան ունի առօրեականության հաղթահարման գործընթացում: Վերջինիս թվին կարելի է դասել ստեղծագործության և նորարարության ընթացքում անսովորի ի հայտ գալը, ինչն էլ դեպի հասարակություն իր ճանապարհն է հարթում որպես շեղումների, կանոններից հեռանալու և նոր որակավորումների դրսևորումներ: Այսինքն՝ առօրեականությունը նաև նոր իմաստների ձևավորման և կանոնների բացահայտման ոլորտ է: Երբ նորը և ինքնատիպը այլևս չեն արտամղվում ընդհանուր կարգը բնորոշող և վերահսկող սկզբունքների կողմից, առաջանում է «մթնշաղախին» գոտի, որտեղ արդեն իրականը և թվացյալը, ավանդականը և նորարականը դժվար է տարանջատել միմյանցից¹¹: Նման դեպքերում սոցիալական իրականությունն սկսում է վերափոխվել նորի դանդաղ ճնշման կամ անսպասելի ճեղքման միջոցով:

Բացի վերոնշյալ գործընթացներից՝ առօրեականությունն օժտված է վերջավոր գիտելիքի ոլորտները (այդ թվում՝ գիտություն, արվեստ, կրոն) մեկ անհակասական իրականության մեջ համադրելու հատկությամբ: Առօրեականությունում տիրապետում է այն ամենի խառնուրդը, որոնք այլ պայմաններում ենթական չեն միավորման և միշտ անջատված են մեկը մյուսից: Առօրյա հարաբերությունները, տարերայնորեն արտացոլվելով առօրյա գիտակցության մեջ որպես հասկացությունների, հայացքների, պատրաստի գիտելիքի համակարգերի, կարծրատիպերի, արժեքային դիրքորոշումների, նորմերի ամբողջություն, օգնում են մարդուն ավելի հեշտ կողմնորոշվելու շրջապատող իրականության մեջ և բարձրացնելու սոցիալական հաղորդակցման արդյունավետությունը:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 48:

Առօրյա աշխարհի կրկնելիությունն ու կայունությունը, ի վերջո, առկա մշակույթում գործառնող նորմալի և բնականի մասին պատկերացումների հիմնական աղբյուրն են: Առօրեականությունը յուրահատուկ ֆենոմեն է, որը խորքային, անգիտակցական մակարդակում հանդես է գալիս որպես տարբեր ինստիտուտների, սոցիալական պրակտիկաների, լեզվական առանձնահատկությունների և հասարակության կերպը որոշող այլ չափորոշիչների ձևավորման պայման: Այս համատեքստում ակնհայտ է, որ առանց առօրեականության ուսումնասիրության հնարավոր չէ ոչ մի հումանիտար և հասարակական գիտություն: Առօրեականության հիմնախնդիրների ուսումնասիրությունը պահանջում է տարբեր մեթոդաբանական սկզբունքների փոխգործակցություն: Այստեղ կարող են կիրառություն գտնել ֆենոմենոլոգիայի, հերմենևտիկայի, անալիտիկ փիլիսոփայության, հոգեվերլուծության բազմաթիվ տեխնիկաներ: Յենց նման միջգիտակարգային մոտեցման շնորհիվ է հնարավոր դառնում առօրյա կառուցվածքների «ընթերցումը»:

Մարդկային առօրյա վարքը սոցիալական իրականության եզրերից մեկն է, և միայն նրա նորմերի իմացությամբ է հնարավոր իրականացնել հասարակական համակարգի էության ամբողջական վերլուծություն:

АРМАН КАРАГУЛЯН – *Повседневность как способ конструирования реальности.* – В статье повседневная жизнь рассматривается как сфера, в которой формируются особенности общества и личности; тем самым аргументируется концепция, что повседневность может служить системообразующим фактором для теоретических построений социальных наук. Исследуя повседневную жизнь общества в социально-философском контексте как область многозначной рациональности и имплицитного знания, на первый план выдвигают её специфические черты. Повседневность особенно важна как интерсубъективный мир, где взаимопроникают и образуют цельное единство все сферы социума, а также формируются культурные детерминанты общественной жизни.

ARMAN GHARAGULYAN – *Everyday Life as a Way of Constructing the Reality.* – The article discusses the sphere of daily life as a way of formation of the peculiarities of a society and a person, and the idea that daily routine can serve as a key factor for theoretical modelling of social sciences is presented. The article highlights the importance of the research of daily routine in socio-philosophical context, and also emphasises the specific features of daily routine of a society as a sphere of multi-valued rationality and implicit knowledge. The discussion of daily life as an inter-subjective world, where all spheres of the society interpenetrate and form an integral unity and where the cultural determinants of social life are established, is of great importance for this paper.